

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտակ Մովսիսյան, Միքայել Մալխասյան, Լիաննա Կարապետյան, Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների (արդի ուսումնասիրություններ և պատմական սկզբնաղբյուրների քրեստոմատիա), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, 388 էջ

Անտիկ հեղինակների երկերն աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն հայոց պատմության հին դարերի պատմությունը շարադրելու հարցում: Դրանք պարունակում են ոչ միայն քաղաքական պատմության, այլև պատմական աշխարհագրության կարևորագույն մանրամասներ: Գրախոսվող աշխատությունը մի կողմից Հայաստանի մասին անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների քրեստոմատիա է, իսկ մյուս կողմից՝ դրանց հիման վրա շարադրված ուսումնասիրությունների ժողովածու: Մույն աշխատանքը մտահղացել և իրականացումը ղեկավարել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի նախկին վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երջանկահիշատակ Արտակ Մովսիսյանը (1970-2020):

Երեք տասնամյակ Ա. Մովսիսյանն ուսումնասիրել է հայոց պատմության հնագույն և հին դարերի ժամականաշրջանի գրային համակարգերը, քաղաքական պատմությունը և պատմական աշխարհագրությունը, հետևաբար գրախոսվող աշխատությունը տրամաբանական հանգրվան է նրա բազմամյա ուսումնասիրությունների համար: Այստեղ ընդգրկված նյութերի մի մասը տարիների ընթացքում առանձին հոդվածների տեսքով հրատարակվել է հայագիտական տարբեր պարբերականներում, սակայն այս աշխատությունը պարզապես գիտական հոդվածների ժողովածու չէ, քանզի հեղինակները հարստացրել են նյութերը լրամշակումներով, ներառել անտիկ ուսումնասիրություններ և հավելել սկզբնաղբյուրներից այնպիսի մեջբերումներ, որոնց մի մասը նախկինում այդ տեսքով չի հրատարակվել հայերեն:

Աշխատության առաջին մասում Ա. Մովսիսյանը հեղինակել է ուսումնասիրություններ Հերոդոտոսի, Կտեսիաս Կնիդացու, Ստրաբոնի և անտիկ այլ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների հիման վրա: Այնուհետև իր սանի՝ Լ. Կարապետյանի հետ նա համահեղինակել է Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունների պատմական աշխարհագրությանը և գահացանկերի ճշտմանը նվիրված ուսումնասիրություններ: Գրա-

խոսվող աշխատության առաջին մասը եզրափակում է Մ. Մալխասյանը՝ Կլավդիոս Պողոմեոսի տեղեկությունների հիման վրա շարադրած իր ուսումնասիրություններով:

Երկրորդ մասում, որն անտիկ սկզբնաղբյուրների պատմաաշխարհագրական տեղեկությունների քրեստոմատիա է, ընդգրկված են Հեկատեոս Միլեթացու, Հերոդոտոսի, Կտեսիաս Կնիդացու, Քսենոփոնի, Էրատոսթենեսի, Դիոդորոս Սիկիլիացու, Սալյուստիոսի, Ստրաբոնի, Արիանոսի, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պողոմեոսի, Ամմիանոս Մարկելիանոսի երկերից քաղված հատվածներ, որոնք պարունակում են Հին Հայաստանի պատմական աշխարհագրությանը վերաբերող տեղեկություններ: Այստեղ, օրինակ, Կտեսիաս Կնիդացու հիշատակությունները, ինչպես նաև դրանց հիման վրա առաջին մասում կատարված ուսումնասիրությունը, փաստացի նորամուծություն են հայագիտության ասպարեզում: Կլավդիոս Պողոմեոսի տեղեկությունները ևս առաջին անգամ են ամբողջական տեսքով լույս տեսնում հայերեն, քանի որ 2011 թ. տպագրված «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա»-ի երկրորդ հատորում հրատարակվել էր միայն նրա երկի՝ Մեծ Հայքին վերաբերող հատվածը, այն էլ առանց տեղանունների ամբողջական ցանկի:

Այսպիսով, Ա. Մովսիսյանի, Մ. Մալխասյանի և Լ. Կարապետյանի աշխատությունն արժեքավոր ուսումնասիրություն է Հին Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ: Այն կարող է օգտակար լինել ոչ միայն նշված ժամանակաշրջանն ուսումնասիրող պատմաբանների, այլև ընթերցող լայն շրջանակների համար: Շատ կարևոր է նաև, որ այստեղ մեկտեղված աղբյուրագիտական մեջբերումները և ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել թուրք-աղբրեջանական պատմագեղծարարությունների դեմ պայքարում:

ԳԵՂԱՄ ԲԱԴՄԱԼՅԱՆ

Ներկայացվել է 02.07.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021